

ԱՐՄԱՆՈՒԷ ԿՈՉՄՈՅԱՆ

ՂՈՒՐԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՁԵՌԱԳԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ (Մատենադարանի հավաքածուից)

Մուհամադի և նրա վարդապետության մասին համաշխարհային պատմագրության մեջ առաջին գրավոր տեղեկությունը պատկանում է 7-րդ դարի պատմիչ Մերեոսին: Հայերը նաև առաջիններից էին, որ մտան Արաքսական խալիֆաթի կազմի մեջ և մեկ-երկու դար հետո զարմանալի հետաքրքրություն ցուցաբերեցին մահմեդական աշխարհի և, մասնավորապես, նրանց Աուրբ գրքի՝ Ղուրանի նկատմամբ: Արաքսական խալիֆաթի հետ անմիջական շփումներից հետո հայ պատմիչները և քրիստոնեական մտքի ջատագովները որոշակիորեն տեղյակ էին իսլամի կայացման, Ղուրանի տարբեր եզրերի, նույնիսկ առանձին սուրաների ձևավորման, Մուհամադի վարքի, արաքսական բանաստեղծական արվեստի և այլ խնդիրներին¹: Հասկանալի է, որ հատկապես հայ պատմիչներն էին առավելապես հակադրում երկու աշխարհները և ջանում էին հիմնավորել իրենց գաղափարները և դրույթները՝ ելնելով սկզբնաղբյուրներից: Պետք է նշել, որ հայ մատենագրության մեջ չկան ուղղակի մեջբերումներ Ղուրանից, որ հասկանալի է դարձնում նպատակը՝ չամբագրել տեքստը, որի դրույթները հակասում են քրիստոնեական հավատի ոգուն և դոգմային:

Մակայն առաջին քրիստոնեախլամական բանավեճերը, իսլամի տեսության հետևողական մերժումը, բացառումը X-XIII դդ. հայ կրոնական և գիտական մտքի կողմից, խոսում են այն մասին, որ հեղինակները տիրապետում էին Ղուրանի լեզվին, կամ էլ, ինչպես նկատում է հայտնի արաբագետ Ա. Տեր-Ղևոնդյանը, ծանոթ էին Ղուրանի հայերեն հատվածային թարգմանություններին, որ, հնարավոր է, մեզ չեն հասել²:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հավաքածուում պահպանվել են Ղուրանի լիարժեք թարգմանություններ և նրա մասերի որոշ փոխադրություններ: Ղուրանի թարգմանությունների ձեռագրերը հաճախ ուղեկցվում են նաև բազմաթիվ պարականոն բնագրերով՝ պատմություններով, պայմանագրերով, որոնք վերաբերում են իսլամին և այն պատմական փաստերին, որոնցում ար-

տացույված են վաղուց ի վեր հայոց և արաբական աշխարհների մեջ գոյություն ունեցող կապերը:

N 934 և N 3109 ձեռագրերը իրենցից ներկայացնում են գրաբարով մեզ հայտնի Ղուրանի առաջին լիարժեք թարգմանության տեքստերը՝ կատարված հմուտ թարգմանիչ, լեզուների գիտակ Ստեփանոս Լեհացու կողմից (մահ. 1689թ.), որը մեր մատենագրության մեջ բազմաթիվ հրաշալի գնահատականներով է հայտնի՝ «...ներևում թարգմանիչ», «վարուքն մաքրակենցաղ՝ և պարկեշտ», Լեհաստանի Լեմբերգ քաղաքից, որ Էջմիածնում, դեռ երիտասարդ, ձեռնադրվել է քահանա և քիչ անց ստացել էր վարդապետի գավազան³:

Ստեփանոս Լեհացու գրչին են պատկանում բազմաթիվ թարգմանություններ (Պրոկլեմեոս, Հովսեփոս, Արիստոտել, Փլաբիանոս ևն), որոնց մեջ Ղուրանը երևի միակներից է, որը հայ մատենագրության մեջ կամ չի հիշատակվում, կամ էլ հիշատակվում է առանց գնահատականի և քննության⁴:

Ղուրանի միջնադարյան թարգմանության ձեռագրերի մեջ ուշադրության է արժանի N 934 ձեռագիրը, որը վերանորոգված է և բավարարվիճակում է: Այն, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, կատարված է երկու տարբեր գրիչների ձեռքով: Ենթադրվում է, որ նրա առաջին մասը եղել է վնասված, հետագայում արտագրվել և նորոգվել է: Այդ պատճառով 11-րդ տետրը կրկնվել է և առաջին մասի գրչի ձեռքով և՛ երկրորդ (119-128):

Սակայն մեր ուշադրությունը գրավեց այն հանգամանքը, որ Ղուրանի մյուս՝ 3109 ձեռագիրը, Լեհացու կենդանության օրոք կատարված կրկնօրինակ է (1680 թ.): Դա մեզ հուշեց ճշտել 934 ձեռագրի երկրորդ մասի գրչի անձը: 934 ձեռագրի երկրորդ՝ չվերանորոգված մասի ձեռագիրը համեմատվեց հենց Ստեփանոս Լեհացու ձեռագրի հետ, որ պահպանվել էր նրա կողմից կատարված Փլաբիանոսի «Հրեական պատերազմ» թարգմանության մեջ: Եվ թղթի նույնությունը և ձեռագիրը ենթադրել տվեցին, որ 934 ձեռագրի երկրորդ՝ չվերականգնված մասը երջանկահիշատակ Ստեփանոս Լեհացու ինքնագիրն է: Այն չի թվագրված, սակայն երկրորդ մասը, որը մենք համարում ենք հենց Լեհացու ինքնագիրը, վերջանում է հետևյալ բառերով. «Կատարեցաւ դուրան, թարգմանեալ ի լատինացոց բարբառոյ ի հայոց լեզու, ձեռամբ Լեհցի Ստեփանոսի բանասիրի»:

Ինչպես տեսնում ենք, Ստեփանոսը իրեն որակում է բանասեր՝ ելնելով իր մասնագիտական լուծումից, առանց այլ մակդիրների: Հենց այդ ձևակերպումը ճիշտ և ճիշտ կրկնօրինակում է 3109 ձեռագրի գրիչը սակայն, կարծես մի աննշան ավելացումով՝ «... լեհցի Ստեփանոս վարդապետի, իմաստուն և բանասիրի... (ընդգծումը մերն է Ա.Կ.):

Հայտնի է մեր միջնադարյան մատենագիրների համեստությունը, որ մերձեցնում էր առավելապես ինքնամերժմանը, այդ պատճառով մեր կողմից նկատված նրբությունը դիտում ենք որպես կրկնակի փաստարկ, որը մեկ անգամ ևս հաստատում է, որ 934-ի դեպքում մենք գործ ունենք Լեհացու ինքնագրի հետ, իսկ երկրորդ՝ 3109 -ի դեպքում՝ կրկնօրինակի:

Ղուրանի թարգմանությունը երկու դեպքում էլ սկսվում է հետևյալ ծանուցումով.

«Այս է գիրք օրինաց Հազաբացուց կամ իսմայելացուց որ կոչի Ղուրան: Այսինքն, հաւաքումն պատւիրանաց», որից հետո սկսվում են գլուխները՝ «Ազօարա, գլուխ առաջին», «Ազօարա, գլուխ երկրորդ...» (ձ.934)» ևն⁵:

Այսպիսով, չկան սուրաների անվանումները ո՛չ արաբերեն և ո՛չ էլ հայերեն թարգմանությամբ: Իսկ «Ազօարա» (Sura - Ա.Կ.) եզրը մշտապես թյուրիմացության մեջ է զգել մույնիսկ փորձված ձեռագրագետներին, որոնք կարդացել են «ադօ(թ) արա», իսկ Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի ձեռագրացուցակի 575 և 576 ձեռագրերի նկարագրությունում կարդում ենք՝ «Ադօարայ», «Ադօարա»⁶:

Ստեփանոս Լեհացու թարգմանության մեջ մեզ զարմացնող առաջին հանգամանքը սուրաների քանակն է՝ 124: Իրականում հայտնի է, որ դրանք 114-ն են:

Հայոց բազմաթիվ աղբյուրներից իմանալով Լեհացու թարգմանական արվեստի բարձր վարպետության մասին, մաս՝ ելնելով Ղուրանի թարգմանության հիշատակարանից, որը ճշտում է, որ այն կատարվել է լատիներենից, մենք վերը նշված անճշտությունների «մեղքը» վերագրեցինք լատիներեն բնագրին: Մակայն դա հարկավոր էր հաստատել:

934 ձեռագրի թարգմանությունից առաջ ներկայացված է ցանկ.

«Այս է ցանկ ղուրանին, կարգաւ որէ սուրա, որէ ՃԻԴ սուրա»: Ձեռագրի ցանկում պահպանված է գլուխների իրական հերթականությունը՝ արաբերեն տառադարձումով, սուրաների անվանումների հայերեն թարգմանությամբ և ստեղծման տեղանվամբ: Մակայն այդ վերնագրերը չեն համապատասխանում Լեհացու թարգմանության տեքստին ո՛չ հերթականությամբ, ո՛չ նշված այաթների քանակով: Գուցե այդ է պատճառը, որ ցանկում թվարկված է ընդամենը 67 անուն, որից հետո 5 դասարկ թերթ կա, հավանական է՝ հետագա լրացման համար: Եթե այդ կիսատ ցանկը չի բխում լատինական բնագրից, ուրեմն պետք է ենթադրել, որ այն կապ չունի Լեհացու հետ և հետագայի ավելացում է:

Լեհացու կողմից կատարված Ղուրանի թարգմանության մեջ այաթներն առանձնացնում են կարմիր գլխատառով: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թարգմանության մեջ տեղավորություններն ու անճշտությունները սկսվում են համարյա առաջին սուրաներից: Օրինակ, ա-

մենաներկար՝ երկրորդ՝ «Կովր» սուրան 286 այաթի փոխարեն ունի 46 այաթ (համարս խզ):

Ղուրանի 4-րդ սուրան՝ «Կանայք», Լեհացու բնագրում 8-ն է, իսկ հայտնի «Հովսեփ» սուրան, որ բնագրում 12-ն է, դարձել է 22-րդը: Այդ նոսրացումներն ու ավելացումներն էլ հանգեցրել են արաբերեն բնագրի հետ սուրաների և այաթների անհամապատասխանությանը:

Ի դեպ, 3109 ձեռագրի լուսանցագրությունում որպես կողմնորոշում գրված է. «Սուրա Հովսեփ, գլուխ 12»: Այդտեղ նաև նշված է, որ Հովսեփին ունեցողը «ոչ թագաւորի կինն էր, այլ դահնապետին»: Այդ դիտողությունը գալիս է Աստվածաշնչից: Այսպիսով, լուսանցագրությունները երբեմն կողմնորոշում են, իսկ երբեմն էլ հակաճանաչում:

Լեհացին Ղուրանի իր թարգմանությունը սկսում է «Ֆաթիհայի» (բացող) երեք տառերեղակով: Երկրորդը դրված է «այլ թարգմանություն», իսկ երրորդը՝ «այլ թարգմանիչ» վերնագրերի տակ: Իրականում «Ֆաթիհայի» երեք թարգմանությունն էլ տառերն են, սակայն հիմնականում՝ ոճով:

Լեհացու թարգմանության մեջ աչքի է ընկնում նաեւ այն, որ վերջին 14 սուրաները ունեն ընդամենը մեկական այաթ (ունի բան մի), այն դեպքում, երբ բնագրում դրանք մեկից ավելի են (ձ.3109): Սակայն թարգմանության տեքստի մեջ, ինչպես մենք համոզվեցինք, հիմնական մտքերը փոխադրված են: Գուցե այդ շատ ակնհայտ անհամապատասխանությունն է դարձել պատճառ և ստիպել Լեհացուն վերջացնել իր թարգմանությունը՝ արդարանալով, թե «Ի վերջոյ Ղուրանին քանի մի ուտանատք եղեալ կան, որք ոչ են թարգմանեալ ի լատինացոց բարբստ ոչ զհոտն զպատճառն» (ձ.934, էջ 285 ա):

Կարծում ենք՝ Լեհացու թարգմանության այս «առեղծվածների» վրա բավականաչափ լույս են սփռում լատիներեն թարգմանությունների մասին այն տեղեկությունները, ըստ որի՝ դրանք կատարվել են 12-16-րդ դդ.: Եվրոպայում: Դրանցից առաջինը (գուցե ամենաանհաջողը), թարգմանվել է 12-րդ և հրատարակվել 16-րդ դարում: Այն կապված է Ռոբերտ Կետոնացու անվան հետ:

Պարզվում է, որ Լեհացին հարազատ է մնացել լատիներեն այդ բնագրին, որտեղ թարգմանիչները, ինչպես ռուս արաբագետ Եֆիմ Ռեզվանն է բնորոշում, սեփական նախաձեռնությամբ և «թարգմանչի աշխատանքի վերաբերյալ իրենց պատկերացումներով» միջամտել են բնագրի՝ իրենց կարծիքով «բարբարոսական» տեքստին⁷:

Թարգմանական գործունեության նման եղանակը միջնադարում շատ տարածված էր: Այսպիսով, գալիս ենք այն եզրակացության, որ ավելորդ 10 սուրաները, սուրաների անվանումների բացակայությունը, «Ագօարա» աղավաղված ձևը՝ որպես սուրա, այաթների քանակի անհամապատասխանությունը ևն, Ստեփանոս Լեհացու թարգմանության մեջ

գալիս են լատիներեն անհաջալ այն քարգմանությունից, որը երկար դարեր որպես բնագիր ծառայել է բազմաթիվ, այդ թվում, ինչպես տեսանք, մաս հայերեն քարգմանության համար:

3109 ձեռագիրը հետաքրքիր է նրանով, որ այն մի ժողովածու է, որի առաջին կեսը Ղուրանի քարգմանությունն է, իսկ հաջորդ մասը՝ զանազան «մերձորդարանյան» բնագրեր, որտեղ արտացոլվում են իսլամական աշխարհը և հայ արաբական հարաբերությունները մեր պատմիչների ընկալմամբ:

«Վարդապետութիւն Մահմէտի յոյժ պատուելի և ընդունելի մահմեդականաց. Ձոր ոմն աբապ գրեաց» (էջ 231բ): «Տեսիլ Մահմէտի Ձոր ինքն հմարեաց և պատմեաց լի առասպելաբանութեամբ» (էջ 246բ): «Ընդդիմադրութիւն բանից Ղուրանին» (էջ 249), «Պատմութիւն Մահմէտի» (էջ 348ա), «Պատմութիւն գալըստեան Մահմէտին ի հայս եւ գնալն ընդդէմ սրբոյն Մահակայ ըոշտունեաց եպիսկոպոսին» (էջ 413ա) ևն:

Այդպես էին կազմվում մաս միջնադարյան եվրոպական քարգմանությունները, որոնց կցվում էին և՛ «սարակինոսների կրոնի» հերքումը, և՛ իսլամն արտացոլող զանազան, մեծ մասամբ՝ ոչ գիտական գրվածքներ:

Երևանի Մատենադարանում պահպանված է Ղուրանի մեկ այլ քարգմանություն ևս՝ 2826 ձեռագիրը, որը XVIII դ. գործ է՝ «Գիրք որ կոչի Ղուրան»: Այն չունի հիշատակարան և քարգմանչին մենք չենք կարողացել անձնավորել:

Թարգմանությունը չունի ցանկ: Սուրաները համարակալված են, սակայն այաթները առանձնացված չեն: Ամեն մի նոր սուրա սկսվում է վերնագրի հայերեն քարգմանությունից, այաթների թվից և նրանց ստեղծման վայրից (Մեքքա-Մեդինա): Այաթների թիվը միշտ չէ, որ համընկնում է արաբական բնագրի հետ: Ղուրանի այս, կարելի է ասել ավելի հաջողակ քարգմանությունը վերջանում է 104-րդ սուրայով՝ «Յադասս վդազ, որ պարտմակէ զհինգ տունս», որ համապատասխանում է Ղուրանի բնագրի 105-րդ սուրային, որ կոչվում է «Փիղ»: Դա կարելի է բացատրել նրանով, որ նշված ձեռագրում առաջին սուրան համարվել է մուտք և ըստ երևույթին հաշվի չի առնվել:

Այս ձեռագրում Ղուրանի քարգմանությունից հետո տեղ է գտել մի շատ հետաքրքիր բնագիր, որ վերաբերում է հայերի իսլամական աշխարհի հետ ունեցած հարաբերություններին և կոչվում է «Պայմանագիր մահմէտի ընդ հայոց»: Դա մի հայտնի փաստաթուղթ է, որը մախսատեսում է արտոնություններ. հպատակ քրիստոնյաներին⁶: Գ. Տեր-Սկրայանին գրված Ն. Մառի մամակից հայտնի է դառնում, որ Մառը հետաքրքրվել է այդ պայմանագրի տեքստով, հատկապես այն ռուսերեն քարգմանելու ցանկությամբ:

Կան Ղուրանի նշված քարգմանության կրկնօրինակներ (8056, 2968, 6984), որոնք ուղեկցվում են այդ պայմանագրի բնագրով: Մակայն հայտնի մատենագետ Հ. Ամասյանը հնագույնը համարում է 6984-ի հիշատակարանը, որն ազդարարում է.

«Փ(առք ամենա) կարողին Հօր (եւ Ռբղոյ եւ հո)գոյն սրբոյ: Աւարտեցաւ Ղօրան Մահմատին որ է Համատան քաղաք, ի քվին Փրկչին Ռ-է-ՃԾ, իսկ Հայոց քվին Ռ-ՃԾԵ, յունվարի սկիզբն՝ առաջին, ձեռամբ Արիստակէս իրիցոյ Համատանցոյ. ով որ կարդայ եւ ստութիւնն տուն առ տուն իմասցի, Ա Հայր-մերիւ զմեղատոքս յիշեսցէ, ամէն»¹⁰:

Այսպիսին է Ղուրանի միջնադարյան մեզ հայտնի քարգմանությունների պատկերը Մատենադարանի հավաքածուում, որից կարելի է եզրակացնել, որ այսօր հայտնաբերվել են երկու տարբեր միջնադարյան քարգմանություններ՝ իրականացված 17 և 18-րդ դարերում:

Ծիշտ է, զանազան տեղեկություններ կան այլ հավանական քարգմանությունների մասին, սակայն գրական փաստը՝ քարգմանությունը, դեռևս չի հայտնաբերվել¹¹: Օրինակ՝ պահպանվել է մի հետաքրքիր տեղեկություն Թորգոմ պատրիարք Գուշակյանի հիշողություններից: Պարզվում է, որ Մ.Թադիստյանը նպատակ է ունեցել զբաղվել Ղուրանի քարգմանությամբ. «Սա (Թադիստյանը Ա.Կ.), վերջին անգամ Կալկաթայեն դէպի Պարսկաստան մեկնած միջոցին, շոգենաւ մտնելէ առաջ, իրեն՝ Պ. Տիմիոքիոսյանին երկու բուսի տալով որկեր է մօտակայ գրավաճառանոց մը, պատուիրելով իրեն համար զնել Գուրանի անգղիներն քարգմանութիւն մը, ըսելով.՝ Եղգենաւ երկամսեայ կեանքիս մէջ կարելի է, որ զայն քարգմանեմ հայերէնի: Այնպես որ, հաւանական է, որ Մ. Թադիստյանց կատարած ըլլայ իսլամական ս. գրքին հայերէն քարգմանութիւնը, անշուշտ՝ գրաբար»¹²:

Գ. Տեր-Մկրտչյանի մի հոդվածից հայտնի է դառնում, որ նա նույնպես մի ժամանակ զբաղվել է Ղուրանի հայ քարգմանության ձեռագրերով: «...ավելորդ չեմ համարում ասելը, որ իմ հետազոտությունից երևաց, որ Ղուրանի հայերէն կրկին քարգմանություն ունինք», իսկ Կ. Եզյանցը 1887 թ. գրում է. «...գոյ քարգմանութիւն Գուրանին ի հայ լեզու չի ևս տպագրեալ: Ի մատենադարանս Մայր Աթոռոյ Մ. Էջմիածնի տեսեալ է մեր օրինակ մի ձեռագիր քարգմանութիւն նորա եւ զայլ եւս օրինակ ի կայսերական մատենադարանին Բերլին քաղաքի: Այլ քանզի չունինք զարդիս ի ձեռին զօրինակսն՝ ոչ կարեմք ասել հաւաստեաւ, թէ մի իցէ արդէօք քարգմանութիւն երկոցունցն և միայն ժամանակի գրութիւն թէ ուրիշ ուրիշ ի միմեանց»¹³:

Բերլինի կայսերական գրադարանի ցուցակն ապացուցեց, որ դա եղել է մեզ հայտնի 2826 ձեռագրի՝ Ղուրանի այն քարգմանության կրկնօրինակը, որի հեղինակին մենք չենք պարզել: Այն իրականացվել է 19 դ., Կոստանդնուպոլսում¹⁴:

Վերը նշված երկու տարբեր թարգմանությունների ավելի ուշ կրկնօրինակները մենք գտնում ենք աշխարհի տարբեր գրադարաններում¹⁵:

Հայտնի է դառնում, որ Ղուրանի թարգմանությունները ինքնանպատակ չէին, և պատվիրատուները իրենց առջև զադափարական և քաղաքական նպատակներ էին դնում: Ղուրանի հայերեն թարգմանության ավանդույթները առավելապես ձևավորվում են 17-րդ դ., որը հայ ժողովրդի պատմության դրամատիկ շրջաններից մեկն է: Դրանք կրել են ավելի շուտ կրոնական, ջատագովական բնույթ, քան հոգևոր- մշակութային: Թարգմանությունները մեկ անգամ ևս ընդգծում են, որ հայոց մեջ կար խոր և ճանաչողական հետաքրքրություն իսլամական աշխարհի նկատմամբ, այն ընդունվում էր որպես միասնական քաղաքակրթություն, իսկ Ղուրանը՝ դրա «սնկյունքսր»:

ARMANUSH KOZMOYAN

MEDIEVAL ARMENIAN TRANSLATIONS OF QURAN IN THE MANUSCRIPTS OF THE MATENADARAN

The depository of Yerevan Matenadaran for Mesrop Mashtots contains 17th and 18 th century translations Of Quran in the Old Armenian. Numerous copies of those translations are stored in different libraries worldwide.

The manuscripts with numbers 934, 3109 and 2826 are of particular significance. The second part of Manuscript 934, which is not restored, is an autograph of Stepanos Lekhatsi, the translator of Guran, while Manuscript 3109 is found to be its copy: it was translated from Latin.

However, there is another translation of Quran (Manuscript 2826), dated to 18 th sentury; most likely, it was translated from the Arabic: the auther is unknown since the manuscript lacks colophons.

Occasionally, these translations are accompanied by different apocryphal texts depicting relations of the Armenians with the Islamic world.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արզառյանի, Երևան, 1979, էջ 135: Գրիգոր Մագիստրոս, Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլավունոյ, Վենետիկ, 1868, էջ 99: Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 808: Վերջինս հետաքրքիր լուսաբանում է ստացել Բարգին Կյուլխեքյանի «Իսլամը հայ մատենագրության մեջ» աշխատության մեջ, Վիեննա, 1930: Մեծիմ Վարդանայ Բարձրբերդեցոյ, Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1881, էջ 92:

2. Тер-Гевондян А.Н., Армения и Арабский халифат Ереван 1977, էջ 263: Հայ արարական հարաբերությունները միջնադարյան աղյուսակներում արտացոլված է մահ Ա. Մեղրոնյանի ատենախոսության մեջ. Мелконян А., Армянские средневековые источники об Арабском халифате. Автореферат канд. дисс. Ереван. 1990:
3. Հմմտ. Պատմություն Առաքել Վարդապետի Դավրիժեցույ, Ի Վաղարշապատ, 1884, էջ 315: Ն.Ալիմհան, Ստեփանոս վրդ. Լեհացի, Հանդես ամսօրեայ, 1912, քի 1, էջ 62:
4. Ա. Դավրիժեցին իր պատմության մեջ Լեհացու թարգմանություններից 4 գիրք է հիշատակում. «Յօսեպոս պատմագիրքն...», «Դիոնիսիոսի Արիսպագացույ գիրքն...», «Գիրք պատճառաց...», «Բանք առակատրք...», իսկ Մ. Օրմանյանը (հղելով Գ.Ջարրիանայանի վրա), ավելացնում է . «Որոնցմն զատ կը յիշատակուին մահ»՝ «Հայեի վարդոց», «Բուրաստան աղօթից», «Հրեշտակաբանություն» և «Պատմություն Ղուրանի»: Տես Մադաթիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Բ, Ս. Էջմիածին, էջ 2896:
5. 934 ձեռագրի երկրորդ՝ այսպես կոչված «Լեհացու ինքնագրի» մասում գրվում է . Ազարա ՃԻԱ, Ազարա ՃԻԲ... ևն:
6. Մեսրոպ Զ.Սեբեանց, Հայ ձեռագիր Ղուրան մի Ի Հնդկա (թարգմ. Ստեփանոս Վարդապետի Իլովեցույ), Բազմավեպ, 1924, էջ 166-169, 204-207: Տես մահ Յուգակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին Ի Վիեննա, Հ. Բ, կազմեց Հ. Ոսկեան, Վիեննա, 1963:
7. Е.А.Резван "Коран и его мхр" СПб. 2001, էջ 356.
8. Հ. Ամասյան, Մանր երկեր, Լոս -Անջելես, 1987, էջ 627-632:
9. Մառը և հայագիտության հարցերը, Երևան, 1968, էջ 223:
10. Հ. Ամասյան, նշվ. աշխ., էջ 628:
11. Լեոն Մինասյանը մեծահասակ, իր սեղմ տեղեկության մեջ Ղուրանի թարգմանությունը սկիզբը հայոց մեջ համարում է 17-րդ դ.: Տես՝ «Ղուրանի հայերեն թարգմանությունը Սպահանում կազմակերպված ցուցահանդեսում», Ալիք, 1997, 7 հոկտեմբերի: Ի դեպ, 20-րդ դարասկզբի առաջին տպագիր թարգմանությունը Ա.Ամիրխանեանցի կատարմամբ, կոդմ (Ավ.Իսահակյան) և դեմ (Մ. Մատենցեան) կարծիքներով, այնուհանդերձ, հայ պարբերական մամուլում արժանացել է ուշադրության: Տես՝ Մատենադարան, Արարչական ֆոնդ, քոթ. 41, վառ. 65-1629, 65-1631. Հորիզոն, 1910, 22 հոկտեմբերի:
12. Թորգոմ պատրիարք Գուշակեան, Հնդկահայք, Տպատրութիւններ եւ տեղեկութիւններ (պատկերազարդ) Երուսաղէմ, 1941, էջ 164:
13. Հանդես Ամսօրեայ, Վիեննա, 1892, էջ 370-371: Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի Վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, Յառաջաբան, էջ Ժա:
14. Verzeichniss der Armenischen Handschriften der Koniglichen Bibliothek zu Berlin von Dr. N. Karamianz. Berlin A. Asher, 1888, էջ 78:
15. 934-ի կոկնդրի մակը՝ # 575 և # 576, գտնվում է Վիեննայում: Տես՝ Յուգակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին Ի Վիեննա, հ. Բ, կազմ. Հ Ոսկեան, Վիեննա, 1963: Լեհացու թարգմանությունը պահպանված է Նոր Ջուղայի թանգարանի ձեռագրացուցակում (#39): Տես՝ Յուգակ ձեռագրաց

Նոր – Զուղայի Ս, Ամենափրկչեան վանաց թանգարանի, հ. Բ, կազմ. Լ.
Մինասեան, Վիեննա, 1972: Մեկ այլ օրինակ՝ Զմմառի վանքի
ձեռագրացուցակում, որն ուղեկցվում է հետևյալ հիշատակարանով: «Եւ
փոխադրեցաւ ի կրկին օրինակէ բաղդատելով ընդ միմեանս
աշխատասիրութեամբ ի Հ. Վրթանիսէ Եիզիւքճիւեանց ի Սիաքանութենէ
Լիքանանեան հարց միանձանց ի յառաքելութեան իւրում ի Պարսս, ի
Զուղա, որ ի Սվահան, յամի Տեառն 1843, 12, փետրար»: Տես Տուցակ
հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հ. Բ, Անտոնեան
հաւաքածոյ. կազմեցին Ն. Ակինեան եւ Հ. Ոսկեան, Վիեննա, 1971, էջ 255: